**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**Ո Ր Ո Շ Ու Մ Ը**

**2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-ԻՆ ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍ-ՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳԻ ՄԵԾ ԴՔՍՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԵՐԻՏԱ-ՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱ-ՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան 18 դեկտեմբերի 2009թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող),

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2009 թվականի հունիսի 23-ին Լյուքսեմբուրգում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության կառավարության միջեւ մշակույթի, կրթության, երիտա-սարդության եւ գիտության բնագավառներում համագործակցության մասին համա-ձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՀՀ մշակույթի նախարար Հ. Պողոսյանի բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության կառավարության միջեւ մշակույթի, կրթության, երիտասարդության եւ գիտության բնագավառներում համագործակցության մասին համաձայնագիրն ստորագրվել է 2009 թվականի հունիսի 23-ին՝ Լյուքսեմբուրգ քաղաքում:

Համաձայնագրի նպատակն է զարգացնել երկու պետությունների միջեւ համագործակցությունը մշակույթի, կրթության, երիտասարդության եւ գիտության բնագավառներում, ինչպես նաեւ նպաստել Հայաստանի Հանրապետության եւ Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության միջեւ բարեկամական հարաբերությունների հետագա զարգացմանն ու ամրապնդմանը, երկու ժողովուրդների առավել լայն ճանաչմանն ու փոխըմբռնմանը:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետեւյալ հիմնական պարտավորությունները.

- համաձայնագրի շրջանակներում իրականացնել երկու երկրների միջեւ մշակույթի, կրթության, գիտության եւ երիտասարդությանն առնչվող ոլորտներում փոխանակումներ, համատեղ կոնֆերանսներ եւ սիմպոզիումներ, կրթաթոշակների փոխադարձ տրամադրում բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանելու համար, գրադարանավարների ու թանգարանագետների փոխադարձ այցելություններ, համալսարանների, ինստիտուտների եւ դպրոցական հաստատությունների կողմից հրատարակված գիտական հրապարակումների, գրքերի, կրթական ձեռնարկների, ինչպես նաեւ հետազոտական, վիճակագրական եւ տեղեկատվական այլ նյութերի փոխանակում,

- հավասար թվով լիազոր ներկայացուցիչներից ստեղծել համատեղ հանձնաժողով, որի նիստերն առնվազն երեք տարին մեկ անգամ՝ այդ մարմինների միջեւ դիվանագիտական ուղիներով նախապես համաձայնեցված ժամկետներում, կգումարվեն հաջորդաբար Հայաստանի Հանրապետությունում եւ Լյուքսեմբուրգում,

- սեփական միջոցների հաշվին ֆինանսավորել կրթաթոշակի տրամադրումը՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանելու համար:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած վերոհիշյալ պարտավորությունները բխում են ՀՀ Սահմանադրության 9 հոդվածում ամրագրված սկզբունքներից եւ երաշխիք են մարդու եւ քաղաքացու սոցիալ-մշակութային բնագավառի հիմնական իրավունքների ու ազատությունների իրացման համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2009 թվականի հունիսի 23-ին Լյուքսեմբուրգում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության կառավարության միջեւ մշակույթի, կրթության, երիտասարդության եւ գիտության բնագավառներում համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ** **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

18 դեկտեմբերի 2009 թվականի
ՍԴՈ-848